ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի մայիսի 10-12-ը Ստրասբուրգ

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Վաչե Տերտերյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն), 2017 թվականի մայիսի 10-12-ը

4. **Հրավիրող կողմը**

Ժողովրդավարության և կառավարման եվրոպական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը**

Մասնակցել Ժողովրդավարության և կառավարման եվրոպական հանձնաժողովի (CDDG) 7-րդ նստաշրջանին:

6. **Քննարկված թեմաները**

- Վարչական և տեղական կառավարման բարեփոխումներ
- Ժողովրդավարական կառավարման մոդելներ
- Ժողովրդավարական կառավարումը մետրոպոլիտան տարածքներում
- Նախարարների հանձնաժողովի որոշումը CDDG-ի աշխատանքների վերաբերյալ
- CDDG-ի գործողությունների ծրագիրը
- Քաղաքացիների մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը

- Տեղական հանրային կյանքում քաղաքացիների մասնակցության վերաբերյալ Նախարարների հանձնաժողովի ընդունած առաջարկների (CM/Rec(2001)19) վերահսկումը
- Ժողովրդավարության ոլորտին առավել համապատասխան փաստաթղթերի ժողովածուի ստեղծում
- Պատշաճ կառավարման և նորարարության ռազմավարություն
- CDDG-ի հեռանկարները 2018-2019թթ. համար, տեսակետների փոխանակում
- Լավ ժողովրդավարական կառավարման և աջակցող բարեփոխումների համար զարգացնող գործիքներ
- Խոշորացման, էլ. կառավարման գործիքակազմի դիտարկում, առկա գործիքների թարմացում
- Նախարարների հանձնաժողովում Կիպրոսի նախագահության գործունեության դիտարկում (22 նոյեմբեր 2016 – 19 մայիս 2017)
- Չեխիայի Հանրապետության՝ Նախարարների հանձնաժողովում գալիք նախագահության առաջնահերթությունները
- Ընթացիկ այլ հարցեր

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նստաշրջանը բացեց ԵԽ Ժողովրդավարության և կառավարման եվրոպական հանձնաժողովի նախագահ Պոլ Ռոուսելլը: Հունաստանի ներքին գործերի նախարար Պանագիոտիս Սկոուրլետիսը ներկայացրեց Հունաստանի վարչական բարեփոխումները և տեղական կառավարման ոլորտում ինստիտուցիոնալ ձեռքբերումները, իսկ Սլովենիայի հանրային կառավարման փոխնախարար Նեյք Բրեզովարը ներկայացրեց տեղական ինքնակառավարման բարեփոխումները Սլովենիայում մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածը: Նրանց ելույթին հաջորդեց իմ ելույթը, որի ընթացքում նախ ողջունեցի բարեփոխումների ճանապարհին այն աշխատանքները, որոնք ներկայացրեցին իմ գործընկերները, կարևորեցի փորձի և տեսակետների փոխանակումն այս համատեքստում և

հանգամանորեն ներկայացրեցի Հայաստանում ընթացող վարչատարածքային, տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումները: Անդրադարձա նաև մայիսի 5-ին Բելգիայում՝ Օյպենում տեղի ունեցած «Հաջողված վարչատարածքային բարեփոխումներ» խորագրով միջազգային համաժողովին, որտեղ ներկայացրել էի Հայաստանում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մակարդակում ընթացող բարեփոխումները: Նիստին ելույթներ ունեցան նաև պատվիրակներ Իսպանիայից, Մոլդովայից, Բելգիայից, Մալթայից, միջազգային փորձագետներ, CDDG-ի անդամներ:

Հաջորդ քննարկումը՝ հանդիպման օրակարգում կառավարմանը և ժողովրդավարությանը վերաբերող այլ առանցքային հարցի՝ հանրային կյանքում էթիկայի թեմայի շուրջ էր: Այս համատեքստում զեկույցներով հանդես եկան ԳՐԵԿՈ-ի և բասկ համայնքների ասոցացիայի ներկայացուցիչները:

Այնուհետև CDDG-ի անդամները մտքեր փոխանակեցին քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության շուրջ՝ տեսակետ հայտնելով, որ պատշաճ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքների կիրառումը պետք է լինի շարունակական և հետևողական:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Նստաշրջանի ավարտին քննարկվեց CDDG-ի 7-րդ նստաշրջանի վերաբերյալ ընդլայնված զեկույցի նախագիծը:

9. Գործուղվողը

Վաչե Տերտերյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

16.05.2017թ.